ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լաքի Տրիո ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
12	Շապիկ մուգ կապույտ ամառային: Մուգ կապույտ կիսաբամբակյա, ուսադիրներով (ուսադիրների երկարությունը՝ 100մմ, լայնությունը՝ 45մմ, օղակաձև 60 մմ երկարությամբ, 50 մմ լայնությամբ՝ մուգ կապույտ գործվածքով ուսադիր վրադիրով) և ծալովի օձիքով (Polo), 65% բամբակ, 35% պոլիէսթեր, քաշը 1մ/2 – 200-220գ: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի տակ դրվող: Առջևից 3 կոճակով կոճկվող բացվածք: Թևքերի երկարությունը մինչև արմունկները: Ուսային մասերը մշակված գունաքողարկված կտորով (կտորը համաձայնացնել պատվիրատուի հետ): Առջևի ձախ կրծքամասում ներկարված գրպան՝ պլաստմասե շղթայով: Գրպանի վերևի մասում 2 սմ բարձրության վրա կարվում է 5 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ օվալաձև կպչունակ՝ կրծքանշանի համար: Թիկունքի վերևի մասում կարվում է 8 սմ լայնությամբ և 29 սմ երկարությամբ՝ մուգ կապույտ կամ սև երանգի կտորի վրա ասեղնագործված «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ/ՁՈՐՔԵՐ», իսկ աջ կրծքամասում 3 սմ լայնությամբ և 13 սմ երկարությամբ՝ մուգ կապույտ երանգի կտորի վրա ասեղնագործված «POLICE» մակագրությամբ բառերը, մակագրությունների գործվածքների կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, իսկ աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի թևքանշան: Թևքանշանները ասեղնագործած՝ միաձույլ, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով:Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

	Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6 քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Լաքի Տրիո ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
12	